ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ռեալ Բուսինեսս ՍՊԸ-ն ՀՀ-ԼՄՍՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/03 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	պլաստմասե աղբարկղ	Contenur կամ «Ай-Пласт» կամ Weber կամ ESE:	240 լիտր	Contenur կամ «Ай-Пласт» կամ Weber կամ ESE:	Պլաստմասե աղբարկղ 240լ Ծավալը՝ 240լ Լայնությունը՝ 583 մմ +/-5% Երկարությունը՝ 738 մմ +/-5% Բարձրությունը (կափարիչի փակ վիճակում)՝ 1060մմ +/-5% Առավելագույն բեռնատարողությունը՝ 96կգ Քաշը՝ 11 կգ +/-5% Գույնը՝ կապույտ Անիվների տրամագիծը՝ 200 մմ Գործարանային երաշխիք՝ 1 տարի Աղբարկղի նկարագրությունը՝ Կառուցվածքը, պարամետրերը և անվտանգության պահանջները համապատասխան EN 840, ISO 9001 և ISO 14001 ստանդարտների

						պահանջների: Աղբամանի իրանի բոլոր չորս կողմերից պետք է առկա լինեն ուժեղացման պլաստիկ կոշտ գոտիներ, ինչպես նաև լրացուցիչ ամրացնող կառուցվածք՝ աղբատարի մանիպուլյատորի բռնիչի համար: Կափարիչը՝ տափակ, աղբամանի գույնի, կափարիչը իրանին միանա 2 ամրակներով: Կափարիչը ունի ապակյա, պլաստիկե շիշ և/կամ թուղթ գցելու համար նախատեսված անցք: Ապակու համար նախատեսված անցքը պետք է ունենա ռետինե փական, որի արտաքին տրամագիծը կազմում է 22-24 սմ, իսկ ներքին տրամագիծը 16-18 սմ, հաստությունը՝ 3-4մմ: Ռետինե փականը պետք լինի ճկուն և օգտագործելուց հետո արագ վերականգնի իր նախկին արտաքին տեսքը: Թուղթ գցելու համար նախատեսված անցքի երկարությունը կազմում է 24-26 սմ, լայնությունը՝ 3-4 սմ: Իրանի երեք կողմերից ներս ընկած բռնիչների առկայություն կամ բռնելու հարմարություն: Աղբարկղը պիտի պատրաստված լինի ցածր ճնշման

						բարձրմոլեկուլային պոլիէթիլենից (HDPE), առաջնային չվերամշակված հումքից, ուլտրամանուշակագույն ճառագայթման հանդեպ կայունություն: Աղբարկղը ունի 200 մմ տրամագծով 2 ռետինապատ անիվներ: Առավելագույն թույլատրելի շեղումները աղբարկղերի պարամետրերում կազմում է ±5%: : Աղբարկղը նոր է, արտադրությունը 2025-26թ., նախկինում չօգտագործված և չվերանորոգված: Աղբամանի դիմային հատվածում փակցված լինի հետևյալ տեղեկատվությունը՝ Մինչև ապրանքը մատակարարելը մատակարարը պարտավոր է մեկ հատ տեխնիկական բնութագրին համապատասխան ներկայացնելու և կտրվածքի չափերը, արտաքին տեսքը վերջնական կերպով Գնորդի հետ համաձայնեցնելու նպատակով: Նմուշը Գնորդի կողմից հաստատելուց հետո Մատակարարը մնացած խմբաքանակը կարող է մատակարարել: Վերոշարադրյալով նշված նմուշը չներկայացնելը, կամ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին

					չհամապատասխանող նմուշ Պատվիրատուին տրամադրելը, կամ եթե տրամադրված նմուշում արձանագրվել է անհամապատասխանություն վերոհիշյալ տեխնիկական բնութագրին, ապա Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապրանքից: Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագրի կնքման օրվանից մինչև 2026թ.-ի մայիսի 20-ը ընկած ժամանակահատվածը: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Ապրանքի օրինակը մինչև մատակարարումը՝ մատակարարը պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ: Մատակարարը պետք է ներկայացնի նաև տեղեկատվություն ապրանքի ապրանքային նշանի, արտադրողի, մոդելի, ֆիրմային անվանման վերաբերյալ: Մատակարարումը պետք է իրականացվի ժամանակին,պատշաճ և որակով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ռեալ Բուսինեսս ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ-ԼՄՍՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/03 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
2					